ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/318

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.12.2021թ. թիվ 26/26-1/20028-2021 գրությամբ «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 30.11.2021թ. թիվ 08-481 գրության հիման վրա, 07.12.2021թ. թիվ 26/26-1/20028-2021 գրությամբ նախաձեռնել է «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ինչի արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնկից:

Ընկերությունը 24.11.2021թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը.

««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի կողից կազմակերպված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով մրցույթին մեր ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնկից և Ձեր կոմից անգործության ժամկետի լրանալուց հետո առաջարկվելու է կնքել երկկողմ պայմանագիր:

Սակայն կատարվել է մեր կողմից սխալմունք: Բանակցությունների ժամանակ առաջարկված 5.580.000/հինգ միլիոն հինգ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ պայամանգրի ընդհանուր գինը ինքնարժեքից ցածր է:

Հաշվի առնելով սպասվող թանկացումները՝ ջրի գնի, գազի գնի, մաքրող հեղուկների, որոնք առաջ բերվում էին Թուրքիայից ավելի մատչելի գներով, տվյալ մրցույթի տեխնիկական բնութագրով նկարագրված 45.000 /քառասունհինգ հազար/ կիլոգրամ լվացքի ծառայությունը հնարաոր չի կատարել որակյալ:

Ուստի հիմնվելով ՀՀ Գնումների մասին օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ն հրաժարվում է առաջարկվող պայամանգրի կնքումից»:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, որոշել է՝ «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար հայտարարված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ինչի արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնկից:

Ընկերությունը 24.11.2021թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը.

««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի կողից կազմակերպված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով մրցույթին մեր ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնկից և Ձեր կոմից անգործության ժամկետի լրանալուց հետո առաջարկվելու է կնքել երկկողմ պայմանագիր:

Սակայն կատարվել է մեր կողմից սխալմունք: Բանակցությունների ժամանակ առաջարկված 5.580.000/հինգ միլիոն հինգ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ պայամանգրի ընդհանուր գինը ինքնարժեքից ցածր է:

Հաշվի առնելով սպասվող թանկացումները՝ ջրի գնի, գազի գնի, մաքրող հեղուկների, որոնք առաջ բերվում էին Թուրքիայից ավելի մատչելի գներով, տվյալ մրցույթի տեխնիկական բնութագրով նկարագրված 45.000 /քառասունհինգ հազար/ կիլոգրամ լվացքի ծառայությունը հնարաոր չի կատարել որակյալ:

Ուստի հիմնվելով ՀՀ Գնումների մասին օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝«Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ն հրաժարվում է առաջարկվող պայամանգրի կնքումից:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, որոշել է՝ «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել և համապատասխան հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ցանկանում ենք հրավիրել այն փաստի շուրջ, որ Ընկերության կամքից անկախ պայմաններում ընդհանուր թանկացումների պատճառով / ջրի գնի, գազի գնի, մաքրող հեղուկների, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ավելի մատչելի էին/ հնարավոր չի կատարել որակյալ աշխատանք:

Մասնավորապես հայտը ներկայացնելուց հետո է միայն պարզ դարձել, այն էլ պաշտոնապես, որ 2022թ. ՀՀ ողջ տարածքում թանկանալու է ջրի մեկ խորանարդի արժեքը, որը արդեն հանդիսանում է մեծ խթան՝ Ընթացակարգով նախատեսված ծառայությունները տվյալ գնով կատարելու համար:

Արդյունքում Ընկերությունից ոչ կախված համընդհանուր թանկացումների հանգամանքը հանգեցրել են ոչ միայն «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ պայմանագիր չկնքելուն, այլ նաև մեծ աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/318 ընթացակարգի շրջանակներում 10.12.2021թ. ժամը 09:05-ին և 16.12.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

<u>3. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.11.2021թ. թիվ 08-481 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«05.11.2021թ. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7 ծածկագրով հայտարարել էր լվացքի ծառայությունների ձեռքբերման ընթացակարգ: Տվյալ ընթացակարգին մասնակցելու համար 12.11.2021թ. հայտ էր ներկայացնել «Սիլվեռ գլաս» ՍՊԸ, որը ճանաչվել էր ընտրված մասնակից: Ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 22.11.2021թ.: Մասնակիցը հրաժարվել է պայմանագիր կնքելուց դրա մասին 24.11.2021թ. տեղեկացնելով Պատվիրատուին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ կետը խնդրում ենք նախաձեռնել գործընթաց «Սիլվեռ գլաս» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/318 ընթացակարգի շրջանակներում 10.12.2021թ. ժամը 09:05-ին և 16.12.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2021/318 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/318 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 24.11.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով մրցույթին մեր ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից և Ձեր կողմից անգործության ժամկետի լրանալուց հետո առաջարկվելու է կնքել երկկողմ պայմանագիր:

Սակայն կատարվել է մեր կողմից սխալմունք: Բանակցությունների ժամանակ առաջարկված 5.580.000 /հինգ միլիոն հինգ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ընդհանուր գինը ինքնարժեքից ցածր է:

Հաշվի առնելով սպասվող թանկացումները՝ ջրի գնի, գազի գնի, մաքրող հեղուկների, որոնք առաջ բերվում էին Թուրքիայից ավելի մատչելի գներով, տվյալ մրցույթի տեխնիկական բնութագրով նկարագրված 45.000 /քառասունհինգ հազար/ կիլոգրամ լվացքի ծառայությունը հնարավոր չի կատարել որակյալ:

Ուստի հիմնվելով ՀՀ գնումների մասին օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն հրաժարվում է առաջարկվող պայմանագրի կնքումից»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 24.11.2021թ. «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել Ընկերության տվյալները համապատասխան հիմքերով լիազորված մարմին ուղարկելու վերաբերյալ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.12.2021թ. թիվ 26/26-1/20028-2021 գրությունը, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 30.11.2021թ. թիվ 08-481 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու և անգործության ժամկետի լրանալուց հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված 24.11.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-22/7» ծածկագրով մրցույթին մեր ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած

մասնակից և Ձեր կողմից անգործության ժամկետի լրանալուց հետո առաջարկվելու է կնքել երկկողմ պայմանագիր:

Սակայն կատարվել է մեր կողմից սխալմունք: Բանակցությունների ժամանակ առաջարկված 5.580.000 /հինգ միլիոն հինգ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ընդհանուր գինը ինքնարժեքից ցածր է:

Հաշվի առնելով սպասվող թանկացումները՝ ջրի գնի, գազի գնի, մաքրող հեղուկների, որոնք առաջ բերվում էին Թուրքիայից ավելի մատչելի գներով, տվյալ մրցույթի տեխնիկական բնութագրով նկարագրված 45.000 /քառասունհինգ հազար/ կիլոգրամ լվացքի ծառայությունը հնարավոր չի կատարել որակյալ:

Ուստի հիմնվելով ՀՀ գնումների մասին օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն հրաժարվում է առաջարկվող պայմանագրի կնքումից»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 24.11.2021թ. «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ վերջինս հրաժարվում է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել Ընկերության տվյալները համապատասխան հիմքերով լիազորված մարմին ուղարկելու վերաբերյալ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 24.11.2021թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված պայմանագիր կնքելուց հրաժարվելու պատճառներին, գտնում եմ, որ դրանք հիմնավոր չեն, և հարկ եմ համարում հայտնել, որ Ընկերության կողմից գնային առաջարկով

ներկայացված գնի և դրանից բխող հետևանքներն ու պատասխանատվությունը տվյալ դեպքում պետք է կրի Ընկերությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.12.2021թ. թիվ 26/26-1/20028-2021 գրությամբ «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սիլվեռ գլաս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**